քննադատներին: Գրական բարքերի առողջացման այս մասնավոր հարցից բացի, Սիրունին բարձրացնում է նաև ասուլիսների ընդհանուր ուղղության ու գործնական ծրագրերի խնդիրը. «Պետք է ըսել..., որ մեզ թելադրող և խանդավառող նպատակը ըլլալով առայժմ գրական պզտիկ շարժում մը ստեղծել թրքահայ գրական կյանքի ներկա լճացած շրջապատին մեջ, մենք առիթը չենք ունեցած մեր այս ձգտումը կապելու որևէ ուղղության հետ, ներկա գրական ասուլիսները սարքելով այս կամ այն ծրագրին վրա, այս կամ այն գրական դպրոցին կամ սեռին շուրջ: Առայժմ մեր գլխավոր ջանքը պիտի ըլլա զբաղիլ թրքահայ գրականության մեջ հետզհետե լույս տեսնող լավագույն գործերով, փոխն ի փոխ մեր ասուլիսներուն նյութ դարձնելով նաև թրքահայ գրականության ամենեն համակրելի դեմքերը, միշտ, սակայն, առաջնորդված այն իդեալեն, որով կ'ուզենք մեր գրողները ավելի խանդավառված տեսնել իրարմով, և հասարակությունը ավելի հետաքրքիր դեպի իր գրականությունը»:

Ասուլիսների նպատակի այդպիսի սահմանումը բնորոշ է մի քանի տեսակետից: Նախ՝ ակնարկելով այն մասին, որ սպասվող «գրական պզտիկ շարժումը» չի հետևելու որևէ ուղղության կամ դպրոցի, բանախոսը մի կողմից արտահայտում էր այն մտայնությունը, որ ձգտում էր հոգևոր կյանքը զերծ պահել ակտիվացած քաղաքական գաղափարների ու կուսակցական կողմնակալ հայացքների աղավաղող ազդեցությունից, մյուս կողմից՝ արձագանքում էր ազգային մշակույթի ինքնատիպության ու անաղարտության այն սկզբունքին, որ շուտով իր ձևակերպումը պիտի ստանար «Մեհյանի» ու «Նավասարդի» հանգանակներում: Այնուհետև՝ ասուլիսները առաջադրելով իբրև գրական կյանքի կազմակերպման եղանակ՝ Սիրունին անուղղակիորեն վկայում էր, որ արևմտահայ մշակութային կյանքը ձգտում է ինքնորոշման ու անկախության՝ կապվելով ազգի նկարագիրը բնորոշող հավերժական ու կայուն արժեքների հետ: Եվ, վերջապես, դնելով կենդանի գրական ուժերի, գրականության մեջ ստեղծվող «լավագույն գործերի» բարձրացման ու արժեքավորման հարցը՝ բանախոսն ընդգծում է այն իրողությունը, որ ամեն մի ծրագրավորվող գրական շարժում, հոգևոր վերածնության ամեն մի հեռանկար բովանդակություն կարող է ունենալ, եթե միայն հենվում է իրական արժեքների վրա: Տեսնել ու վեր հանել այդպիսի արժեքները, նշանակում է հաստատել ազգային վերածնության